«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում.

Դաստիարակ՝Վիրաբյան Սուսաննա

Մանկապարտեզ՝ «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……..……....2-3

ԳԼՈՒԽ 1

Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձեւ,
նրա նշանակությունը……..……..…….5-10

1.1Էքսկուրսիան որպես գիտելիքների գործընթաց……...…11-12

ԳԼՈՒԽ 2

Էքսկուրսիաների անցկացումը……..……16-18

Գործնական մաս …..……..…… ……..……19-20

Մեթոդիստի Եզրակացություն ……..……..……21

Եզրակացություն ……..……..……....22-23

Գրականության ցանկ ……..……..……..24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական (այսուհետ ն/դ) տարիքը անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է, ուստի շատ կարևոր է տարբերակն, թե այս շրջանում երեխային ինչ է պետք սովորեցնել, հաղորդել, և առավել կարևոր է, թե ինչպես, ինչ մեթոդներով ու ձևերով դա անել:

Ն/դ տարիքի յուրաքանչյուր երեխա հետաքրքրասեր և անհագ է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ և սպունգի պես կլանում է գիտելիքները: Այս տարիքում ամեն ինչ հետաքրքիր է երեխային և նա ակտիվորեն ընկալում է աշխարհը, հետևաբար երեխայի տարիքային այս առանձնահատկությունը պետք է առավելագույնս ճիշտ օգտագործվի դ ուսումնական հաստատությունում իրականացվելիք կրթադաստիարակչական գործունեության ընթացքում: Հենց այս ժամանակահատվածում կարևոր է երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի, բնության նկատմամբ, հետաքրքրություն առաջացնել նրա մշակութային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումները անձի, հասարակության մասին: Այսպիսի կարողունակությունների ձևավորմանը մեծապես նպաստում են պարբերաբար կազմակերպվող էքսկուրսիաները և մշակութային այցերը: Ուսումնական և դաստիարակչական այս առանձնահատուկ ձևը հնարավորություն է տալիս բնական պայմաններում դիտարկել առարկաները և երևույթները: Միաժամանակ երեխայի մոտ ակտիվացնում է մտավոր ակտիվությունն ու հուզական ոլորտը:

Էքսկուրսիաներն ու մշակութային այցերը տեսարժան վայրերի, թանգարանների գրադարանների, թատրոնների, արտադրական ձեռնարկությունների, պատմամշակութային կոթողների և բնության գիրկ այցելություններն են՝ ուսումնադաստիարակչական նպատակներով:

Էքսկուրսիաների էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համակցության մեջ: Այն զննական մեթոդ է : Էքսկուրսիաները և մշակութային այցերը գործունեության այն ձևերն են, որոնք երեխաներին իսկապես դուր են գալիս:

Թեմայի արդիականությունը. Մեզ բախտ է վիճակվել աշխատել 21-րդ դարի ուսումնական հաստատությունում, ինչը մեզանից պահանջում է անընդհատ նոր մոտեցումների, առավել ռացիոնալ մեթոդների է գործունեության ավելի հետաքրքրաշարժ ու ժամանակակից ձևերի կիրառում արդի ուսուցումը կյանքի հետ կապելու, ուսուցման, դաստիարակման մեթոդներն ու ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու նոր

պահանջներից ելնելով: Հենց այդպիսի գործունեության ձևերից մեկն էլ էքսկարպիաներն ու մշակութային այցերն են:

Համապատասխանությունը նոր չափորոշչի և ծրագրի պահանջներին. Ըստ նոր ծրագրային՝ պահանջների գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ պետք է լուծել սանի ֆիզիկական, մտավոր, բարոյական աշխատանքային, տնտեսագիտական, իրավական, էկոլոգիական, սեռային, գեղարվեստագ-եղագիտական դաստիրակության խնդիրները, և, ըստ այդ գործունեության ձևերի, այդ խնդիրներից շատերն իրականացվում են արտամանկապարտեզային պայմաններում: Եվ հենց այստեղ է, որ շատ մեծ ու կարևոր է էքսկուրսիաների ու մշակութային այցերի ընձեռած հնարավորությունները, քանի որ գործունեության այս ձևով ապահովվում է նոր չափորոշչի ոլորտային վերջնարդյունքներից շատերը և ձևավորում կատաղունակությունները, հատկապես՝

- լեզվական և հաղորդակցական կարողունակությունը
- ճանաչողական և մուրխիվացիան կարողունակությունը
- ինքնամանաչողական ն սոցիալական կարողունակությունը
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը
- մշակութային կարողունակությունը
- տնտեսական կարողունակությունը
- ֆիզիկական կարողունակությունը

Նպատակը. Նկատի ունենալով թեմայի արդիականությունը շատ կարևորելով ուսուցման ու դաստիարակության տվյալ գործունեության ձևը, իմ հետազոտական աշխատանքի կատարումը նպատակ ունի տեսական նյութի ուսումնասիրմամբ, էքսկուրսիաների և մշակութային այցերի իմ փորձից ներկայացմամբ, ևս մեկ անգամ կարևորել գործունեության այս ձևը, ներկայացնել դրանց արդյունավետությունը՝ սանի զարգացման գործում, կատարել առաջարկներ, որոնք կնպաստեն դրա ակտիվացմանը:

ԳԼՈՒԽ 1
Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձեւ, նրա նշանակությունը

Էքսկուրսիա բառը լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղեւորություն կամ կուլտուր լուսավորչական նպատակ: Վերջերս լայնորեն տարածվել է 14-րդ դարի սկզբին ինչպես արտասահմանում, այնպես էլ մեզ մոտ: Էքսկուրսիան արտադպրոցական

դաստիարակության ճյուղերից մեկն է: Արտադպրոցական

նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ

նպատակաուղղված է նրանց հոգեւոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը... դաստիարակության

միջոցով նրանց ստեղծելն է, այն

1. Մուտքային էքսկուրսիաները, ինչպես նաեւ մուտքային դասերը, նախապատրաստում են ուսումնասիրելու այս կամ այն թեման: Այս էքսկուրսիաների ընթացքում հավաքվում են նյութեր, որոնք էլ հետագայում օգտագործվում են համապատասխան թեմայի ուսումնասիրման ժամանակ:

2. Ընթացիկէ քսկուրսիաներն անցկացվում են նոր թեմայի ուսումնասիրմանը զուգահեռ: Սա հատկապես իրականցվում է, երբ նոր նյութի յուրացումը հնարավոր չէ ապահովել բառային մտապատկերներով: Օգտակար է այն անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետո:

3. Ամփոփիչ էքսկուրսիաներն անցկացվում են թեմայի ուսումնասիրման ավարտին: Նպատակն է սովորեցնել երեխաներին ձեռք բերած գիտելիքները համեմատել

արտադպրոցական դաստիարակությունն

ստեղծագործական եւ գեղագիտական

արվեստի դպրոցների, ճամբարների

իրականացնող այլ կազմակեպությունների միջոցով:

Էքսկուրսիաները կատարում են այն նույն գործառույթները, ինչ որ դասերը. ուսուցանող, դաստիարակող եւ զարգացնող:

Դրանք են՝

Կրթական

- Գիտելիքների խորացում, առանձին առարկաների եւ երեւույթների մասին պատկերացումների կազմում
- Գործնականում տեսական գիտելիքների կիրառում Զարգացնող
- Դիտումներ կատարելու կարողությունների զարգացում, ուշադրության, հիշողության ընդունակության զարգացում: Դաստիարակչական
- Գեղագիտական դաստիարակություն
- Հայրենասիրության դաստիարակում, բնության նկատմամբ սիրո դաստիարակում

իրականացվում է մանկապատանեկան կենտրոնների, երաժշտական, նկարչական, եւ արտադպրոցական դաստիարակությունՄինչ դպրոցական համակարգի վերակառուցման մասին օրենքը, էքսկուրսիաները մեծ մասամբ անց էին կացվում բնությանը, արտադրությանը ծանոթացնելու նպատակով:Օրենքի հրատարակումից հետո ավելի քան երբեւէ, բարձրացավ էքսկուրսիայի դերը: Այժմ ուսուցումը կյանքի հետ կապելու, դասավանդման մեթոդներն ու ձեւերը կատարելագործելու եւ ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով՝ էքսկուրսիան դիտվում է որպես ուսուցման կազմակերպման մի յուրահատուկ ձեւ, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց: Գիտելիքի հաղորդումը կարելի է կատարել դաս- էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով , որ այդ ձեւով յուրացումս ավելի կայուն ու խորն է լինում, իսկ դասն ավելի աշխույժ ու հետաքրքիր է անցնում:

ա) Էքսկուրսիայի անհրաժեշտության հոգեբանամանկավարժական հիմնավորումը:

Հիմք ընդունելով այն, որ օբյեկտիվ իրական աշխարհի ճանաչողությունը սկսվում է զգայությունից, ուսուցման պրոցեսում մեծ տեղ է տրվում էքսկուրսիային: Իրական աշխարհի զգայություններն ու ընկալումները համապատասխանորեն իմաստավորվում եւ վերամշակվում են մեր գիտակցության մեջ:Մեր աչքին միանում են մյուս զգայարանները եւ մտածողության գործունեությունը:Զննական ընկալումը հեշտացնում է աշակերտների գիտելիքների յուրացման պրոցեսը:Քանի որ

աշակերտների մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը, ուստի զարգացման վաղ էտապներում նրանք մտածում են ավելի շատ պատկերներով, քան հասկացողություններով:Հասկացողությունները եւ վերացական գաղափարները սովորողի գիտակցությանն ավելի հեշտ են հասնում, եթե դրանք ամրապնդվում են կոնկրետ փաստերով, օրինակներով ու պատկերներով:Այսպես այլ ձեւով է ընկալվում եւ մտապահվում առարկան կամ երեւույթը ցուցադրմամբ, այլ ձեւով՝ նկարագրությամբ:

Էքսկուրսիոն մեթոդը օգտագործվում է դպրոցական կյանքի տարբեր բնագավառներում եւ հետապնդում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական նպատակներ:

Էքսկուրսիան ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երեւույթների միջեւ եղած կապերը, պատճառի ու հետեւանքի փոխկապվածությունը եւ մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը:

Այս ամենը նպաստում են երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց գիտակցական կարգապահությունը, սեր են արթնացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք են դաստիարակում շրջապատի ու ընդհանրապես հայրենի երկրի բնության նկատմամբ:

Ինչպես հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել՝(<<Երկերի լիակատար ժողովածու>>) բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երեւույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջեւ եղած պատճառահետեւանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է, մի ուսուցիչ, որ ամենից հեշտ ու դյուրին ձեւով, խոր ու կայուն կերպով սովորեցնում է մարդկանց բնությունը ճանաչել: Ահա թե ինչու ուսուցման պրոցեսում լայնորեն պետք է օգտագործել էքսկուրսիաները, որպես ուսուցման միջոց, որպես շրջապատի

բնությունն ու հասարակությունը ճանաչելու, շրջապատի մասին ռեալ գիտելիքներ հաղորդելու եղանակ:

բ)Էքսկուրսիայի կրթադաստիարակչական նշանակությունը:

Էքսկուրսիաները ընդլայնում են աշակերտների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երեւույթներ, որոնք դպրոց բերել հնարավոր չէ, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը եւ մարդու աշխատանքը բնության եւ հասարակության մեջ: Էքսկուրսիաները բացառիկ կարեւոր նշանակություն ունեն նաեւ երեխաների խոսքի զարգացման համար : Ինչպես հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն էր ասում. «Ուսուցման մեջ առաջինը եւ կարեւորը դիտողականությունն է, երեխայի առաջին դիտողականությունները վարժեցնում են նրա զգայարանները, իսկ զգայարանն այն դուռն է, որով արտաքինը մտնում, թափանցում է ներքին աշխարհը, ինչ-որ չի անցնում զգայարաններով, նա առհասարակ չի մտնում հոգու մեջ, ուստի միշտ ուսուցման պրոցեսում նախ պետք է երեւան գա գաղափարը, իսկ հետո՝ բառը: Միայն այդպես կարելի է դիտողականությամբ մշակել լեզուն, իսկ լեզվով՝ հոգին ու միտքը[1]»:Գրեթե նույն կարծիքն է հայտնել նաեւ ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին:Նա գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի, առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: Ու ոչ մի ձեւով հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի միջոցով, որովհետեւ այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երեւույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի:

Էքսկուրսիան լավագույն նյութ է տալիս ոչ միայն բանավոր, այլեւ գրավոր խոսքի զարգացման ու մշակման համար:Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները ամենից ավելի հաջող շարադրություններ գրում են էքսկուրսիաների վերաբերյալ, որովհետեւ նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը

Պետք է նկատել, որ էքսկուրսիայի ընթացքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երեւույթներն են դիտվում, այլ բազմաթիվ այլ նյութեր են հավաքվում (հերբարումներ ու հավաքածուներ կազմելու համար եւ այլն):

Էքսկուրսիաները բացառիկ կարեւոր նշանակություն ունեն նաեւ դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ դպրոցից դուրս իրենց պահելու ուսուցչի կարգադրությունները ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն:

Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերեւույթի ձեւերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը եւ ամենից շատ սիրում ու գնահատում այն:Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաեւ երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամեն տեղ՝ բնության մեջ, կյանքում եւ աշխատանքում:

Էքսկուրսիայի ընթացքում ձեւավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն եւ այլն:

Էքսկուրսիայի ժամանակ երեխաները ձեռք են բերում բնավորության այնպիսի գծեր ինչպիսիք են հաստատակամություն, համառություն, դժվարությունները հաղթահարելու կամք:

Էքսկուրսիայի ժամանակ բացահայտվում է աշակերտի բնավորությունը, նրա շատ ընդունակություններ ի հայտ են գալիս:

Էքսկուրսիայից ստացած տպավորությունները ավելի անմիջական են եւ պահպանվում են ավելի երկար: Եվ պատահական չէ, որ ասում են լավ է մեկ անգամ տեսնել, քան տաս անգամ լսել: Օրինակ ՝ չորրորդ դասարանում երեխաների գիտելիքները ավելի կայուն կդարնան, երբ էքսկուրսիայի ժամանակ իրենց աչքով տեսնեն եւ դրան զուգահեռ լսեն թե ինչ է գետի հունը, աջ եւ ձախ մասերը եւ այլն:

Էքսկուրսիայի ժամանակ շատ երեւույթներ աշակերտները կարող են տեսնել, բայց չհասկանալ, այս գործում մեզ օգնության է գալիս ուսուցչի բացատրությունը, որը կարող է ինչպես նախորդել, այնպես էլ զուգակցել ու հաջորդել

էքսկուրսիային:Գիտելիքների ընկալմանը հաջորդող էքսկուրսիան նպաստում է աշակերտների նախօրոք ստացած գիտելիքների ամրապնդմանը, իսկ թեմային նախորդող էքսկուրսիան հիմք է հանդիսանում նոր գիտելիքների ընկալման համար, աշակերտները նախնական տվյալներ են հավաքում այս կամ այն թեման յուրացնելու համար:

Ուսուցման պրոցեսում կարեւոր նշանակություն ունեն նաեւ արտադրական էքսկուրսիաները: Այս կամ այն առարկաներից գիտելիքներ սովորելով՝ երեխաները ծանոթանում են (հատկապես ցածր դասարաններում) այն պարզ սարքերին , որոնք հիմք են հանդիսանում ամենաճշգրիտ ու ամենաբարդ մեքենաների ստեղծմանը որից ծնվում են ամենաբարդ արտադրական պրոցեսները:

Ուրիշ ոչ մի միջոց չի կարող աշակերտներին այնքան կոնկրետ պատկերացում տալ արդյունաբերության մասին, որքան արտադրական էքսկուրսիաները:Սրանց միջոցով է , որ աշակերտները կարողանում են գրքերում կարդացածը տեսնել արտադրության մեջ: Չի կարելի երբեք էքսկուրսիայի անցկացմանը երկրորդական նշանակություն տալ, լրացուցիչ կամ ավելորդ աշխատանք համարել, դիտել որպես ուսումնական պրոցեսին օժանդակ միջոց:

գ)Էքսկուրսիայի ամփոփումը:

Ամփոփումը կարող է տեղի ունենալ ինչպես էքսկուրսիայի վայրում, այնպես էլ դասարանում՝ նայած էքսկուրսիայի բնույթին եւ ուսուցչի հետապնդած նպատակներին:Այն կարող է բանավոր զրույցի, հարց ու պատասխանի , պատմելու բնույթ կրել, կարող է նաեւ հավաքած նյութերի(հերբարիումներ) ուսումնասիրության ձեւով անցկացվել:

1.1Էքսկուրսիան որպես գիտելիքների գործընթաց

Էքսկուրսիան որպես գիտելիքների գործընթաց. Գիտելիքի իմաստը կայանում է նրանում, որ դրա ընթացքում որոշակի ճշմարտություն է յուրացվում: Ճանաչումը մտածողության մեջ իրականության արտացոլման և վերարտադրման գործընթացն է: Միևնույն ժամանակ սա սուբյեկտի (զբոսաշրջիկի) և օբյեկտի (հուշարձանի) փոխազդեցությունն է, որի ընթացքում սուբյեկտը ստանում է գիտելիք: Էքսկուրսիայի վրա ճանաչողության գործընթացը տեղի է ունենում ըստ սխեմայի՝ տեսանելիություն - ընկալում (զգացողություն, ներկայացում) - էքսկուրսիոնիստների կողմից գաղափարների ստացման հիման վրա հասկացությունների ձևավորում:

Էքսկուրսիան որպես ճանաչողության գործընթաց մարդկանց առարկայական-զգայական, գործնական գործունեություն է: Գիտելիքի օբյեկտներ՝ արտաքին աշխարհի օբյեկտներ՝ պատմության և մշակույթի հուշարձաններ, բնություն, պատմական վայրեր և այլն:

Ճանաչողության գործընթացը սկսվում է մարդու զգայարանների և առարկայի միջև շփման առաջացմամբ: Դիտարկվող առարկաների ընկալումը տեղի է ունենում տեսողական և լսողական սենսացիաների հիման վրա: Նրանց օգնությամբ ձևավորվում են ներկայացուցչություններ: Զբոսաշրջիկների վերացական մտածողության մեջ ճանաչողության գործընթացը շարունակվում է: Սրա հիման վրա եզրակացությունների են գալիս. Էքսկուրսիան որպես ճանաչողության գործընթաց բաղկացած է երկու մասից՝ զգայական ճանաչողություն (զգայացում, ընկալում, ներկայացում) և տրամաբանական ճանաչողություն (մտածողություն): Այս մասերը շրջագայության հիմքն են:

Սենսացիա - զգայական պատկեր է, մարդու ուղեղի կողմից առարկաների և երևույթների անհատական հատկությունների արտացոլման մտավոր գործընթաց: Սենսացիաները թույլ են տալիս մարդուն իր մտքում դրսևորել առարկաների և երևույթների այնպիսի հատկություններ և որակներ, ինչպիսիք են դրանց չափը, ձևը, ձայնը, ջերմաստիճանը, հոտը, արագությունը, կարծրությունը, ծանրությունը

և այլն: Զգացմունքը ծառայում է որպես զգայական պատկերների աղբյուր, ինչպիսիք են ընկալումը և ներկայացումը: .

Ընկալումը օբյեկտի զգայարանների վրա ազդեցության արդյունք է: Այն ավելի բարդ է, քան սենսացիան և կառուցված է մի քանի սենսացիաների վրա: Նրանցից յուրաքանչյուրն արտացոլում է առարկայի, երեւույթի, իրադարձության առանձին հատկություն: Սենսացիաների ամբողջությունն այն է, ինչ կոչվում է ընկալում: Էքսկուրսիայում ընկալումը էքսկուրսիոնիստի զգայական օրգանների վրա առարկայի և բանավոր տեղեկատվության ազդեցության արդյունք է: Ընկալումները բաժանվում են տեսողական, լսողական, շոշափելի, համային և հոտառական: Յուրաքանչյուր տեսակի ընկալման հիմքը սենսացիաների համապատասխան տեսակն է (տեսողական, լսողական, շոշափելի): Շրջապատող իրականության մարդկային ճանաչողության մեջ ամենազարգացածը տեսողական ընկալումներն են:

Էքսկուրսիաների համար ուշադրության կենտրոնացումը և փորձի միասնությունը պարտադիր են՝ նպաստելով վերլուծվող նյութի խորը ընկալմանը:

ԳԼՈՒԽ 2

Էքսկուրսիաների անցկացումը

Էքսկուրսիան սկսվում է նրանով, որ էքսկուրսիայի վայրում ուսուցիչը հավաքում է բոլոր աշակերտներին, հիշեցնում էքսկուրսիայի նպատակը, տրված առաջադրանքները, աշակերտի անելիքներն ու պարտավորությունները:

Էքսկուրսիայի ժամանակ ուսուցիչը աշակերտների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի աշակերտը անհրաժեշտ ուշադրությամբ դիտի այն:

Ուսուցչի հիմնական խնդիրն է նախատեսված օբյեկտի դիտման, զննման ճիշտ կազմակերպումը:Դրա համար ամենից առաջ աշակերտների մեջ հետաքրքրություն պետք է առաջացնի դեպի տվյալ օբյեկտը,որպեսզի նրանք անհրաժեշտ ուշադրությամբ ու լարվածությամբ դիտեն այն: Այս նպատակով նա աշակերտներին այնպիսի հարցեր պետք է առաջադրի,որոնց պատասխանը գտնելու համար նրանք հարկադրված լինեն ամբողջ էքսկուրսիայի ընթացքում ուշադրությամբ դիտել ուսումնասիվող օբյեկտը, առարկան, երեւույթը, փորձեն այն ընկալել բազմակողմանի, համեմատել այն այլ օբյեկտների, առարկաների, երեւույթների հետ համեմատելու,գտնելու դրանց էական ու երկրորդական հատկանիշները, դրանց առանձին մասերն ու համադրման ձեւերը:

Էքսկուրսիաների անցկացման ընթացքը կարելի է բաժանել փուլերի, եւ յուրաքանչյուր փուլի համար աշակերտին տալ առանձին հանձնարարություն: Առաջին հանձնարարություն ստուգելուց հետո կարելի է տալ հաջորդ հանձնարարությունը: Այսպիսի մոտեցումը օբյեկտի զննությունը դարձնում է ավելի մատչելի ու կոնկրետ,աշակերտները միանգամից իրենց ուժերից վեր հանձնարարություններ չեն ստանում: Էքսկուսիայի անցկացման այս ձեւը ավելի արդյունավետ է ցածր դասարաններում: Ցածր դասարաններում նաեւ ցանկալի է կազմակերպել գավառագիտական էքսկուրսաներ(դեպի թանգարան,կենդանաբանական ու բուսաբանական այգիներ, պատմական հուշարձաններ, սելեկցիոն կայաններ):Վերջինիս մեթոդական տարբերությունն այն է,որ այսպիսի վայրերում ավելի շատ նմուշներ կարելի է տեսել քան անհրաժեշտ է,

ուստի ուսուցիչը նախապես պետք է ծանոթանա առկա նմուշներին, որպիսի էքսկուրսիայի ընթացքում կարողանա այնպես կազմակերպել ընթացքը, որ երեխաները հնարավորինս քիչ ավելորդ նմուշներ տեսնեն:

Էքսկուրսիայի ընթացքում կարելի է նախապես պայմանավորվել էքսկուրսավարի հետ, ասել նրան ասվելիք նութին անհրաժեշտ խորության, ծավալի մասին, եւ նրան թողնել ընթացիկ բացատրությունները: Բայց նաեւ բացատրությունները կարող են մատուցվել հենց ուսուցչի կողմից,եթե իհարկե նա նախօրոք շատ լավ ուսումնասիրել է նյութը, ծանոթացել ցուցանմուշներին եւ դրանց դասավորությանը: Յուրաքանչյուր ցուցանմուշի մասին աշակերտին պետք է տեղեկություն տալ առանձին- առանձին: Ընդ որում այն կարելի է անել 2 ձեւով. Բացատրել այնուհետեւ թուլ տալ աշակերտներին զննել դրանք, կամ հակառակը՝ թույլ տալ, որ ուսումնասիրեն, ապա տալ անհրաժեշտ մեկնաբանությունը:

Էքսկուրսիայի ընթացքում աշակերտների մեջ թեմային չվերաբերվող բազմաթիվ հարցեր կարող են առաջանալ, որոնք երբեմն լուրջ դժվարություններ կստեղծեն ուսուցչի համար, մանավանդ եթե նա սկսնակ է: Ուսուցչի հիմական խնդիրներից մեկն էլ պետք է լինի այն,որ նա աշակերտներին պահի էքսկուրսիայի հետապնդած նպատակների շրջանակներում՝մի կողմ թողնելով երկրորդական կարգի կամ բուն նյութին չվերաբերվող հարցերը, որոնք քննարկման կարող են ենթարկվել էքսկուրսիայից հետո:

Ուսուցիչը պետք է պատասխանի միայն այն հարցերին, որոնց պատասխանները կլինեն ընկալելի եւ կկարողանան ազդել աշակերտի մոտ աշխարհաճանաչողության զարգացմանը: Իհարկե այդ հարցերի մեջ կհանդիպեն այնպիսինները, որոնք աշակերտը ինքնուրույն կարող է լուծել, լրացուցիչ դիտարկումների եւ հետազոտությունների միջոցով: Նման

դեպքում պետք է թողնել, որ աշակերտը ինքը գտնի իրեն հետաքրքրող հարցի պատասխանը:

Նպատակահարմար է արդյունաբերական եւ գյուղատնետեսական արտադրությանը,քաղաքի եւ գյուղի կյանքին վերաբերող գործնական բնույթի էքսկուրսաիները անցկացնել գործարանում, էլեկտրակայանում, բանջարանոցում,

այգում եւ այլ ձեռնարկություններում: Եվ սրանք բնականաբար իրենց բնույթով տարբերվում են դեպի բնություն կազմակերպվող էքսկուրսաիներից:

Այսպիսի դեպքերում աշակերտը ծանոթանում է նյութական բարիքների ստեղծման մեխանիզմներին եւ ընթացքին, զրուցում է արտադրությունում աշխատող մարդկանց հետ, սովորում է հարգել աշխատանքի մարդկանց, հարգանքով վերաբերվել այն բարիքներին,որն ինքն օգտագործում է, եւ հաճախ անգամ գաղափար չի ունենում թե ինչ դժվարությամբ են դրանք արտադրվել:Իսկ երբեմն էլ աշակերտները անձամբ մասնակցում են արտադրության գործընթացին:Այսպիսի էքսկուրսիաները ունեն թե ճանաչողական եւ թե դաստիարակչական բնույթ: Եվ նմանատիպ էսկուրսիաները սովորաբար թողնում են դրական մեծ ազդեցություն:

2.1 Էքսկուրսիան որպես կրթադաստիարակչական գործունեության ձև

Կրթության և դաստիարակության ձևերի և մեթոդների շարքում, երբ ուսումնասիրում ենք որևէ կրթական ծրագիր կամ մեթոդական ձեռնարկ ուղեցույց (հատկապես ռուսական գրականության մեջ), ապա շատ դեպքերում առաջին տեղում էքսկուրսիան է: Պատմությունը չի պահպանել հիշատակում, թե երբ և ում կողմից է իրականացվել առաջին էքսկուրսիան ընդհանրապես, բայց մենք հաստատ գիտենք, որ որպես ուսումնական մեթոդ, էքսկուրաները սկսեցին ներմուծվել կրթական գործեաց Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի մանկավարժների կողմից 18-ի դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Ուսուցման այս ամենահետաքրքիր ձևի անվանումը գալիս է լատիներեն՝ «էքսկուրսիա» բառից, այն ի սկզբանն նշանակում էր «արշավանքը»:

Էքսկուրսիան կրթական կամ ժամանցային նպատակով կազմակերպված կոլեկտիվ ուղևորություն, զբոսանք, շրջագայություն է դեպի բնություն, արդյունաբերական կամ կրթական կառուցները, տեսարժան վայրեր:

Էքսկուրսիայի էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համադրության մեջ: Եթե այդ համադրությունից բացակայի ցուցադրումը

ապա այն կվերածվի պարզապես զրույցի: Իսկ եթե էքսկուրսիան զուրկ լինի բացատրությունից, ապա ցուցադրումն էլ իր հերթին կվերածվի ուղղակի տեսարժան վայրի այցելության:

Ուսուցման կազմակերպման այս ձևը կիրառելի է նաև ն/դ ուսումնական հստատություններում, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց: Հետևաբար ուսումնադաստիարակչական գործընթացում գիտելիքի հաղորդումը ցանկալի է պարբերաբար կատարել էքսկուրսիաների միջոցով նկատի ունենալով, որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ գիտելիքի աշխուժ խետաքրքիր փոխանցումը ավելի դառնում:Այն ինչը տեսնում է սանը, տպավորվում է նրա գիտակցության մեջ դաստիարակի պատմածի, բացատրածի որոշակի իրադրությունների, երևույթների , փաստերի, շնորհիվ: Դաստիարակը, ցուցադրելով միաժամանակ սովորեցնում է ճիշտ ընկալել տեսածը: Այսպիսով էքսկուրսիաները օգնում են ն/դ տարիքի սաներին պատկերացում կազմել շրջապատող աշխարհի մասին հենց լսածը տեսնելու, վերացականը ակնառու-պատկերավորի փոխարինելու որոշակի իրադարձությանը մասնակից լինելու միջոցով:

Էքսկուրսիաների անցկացումը

Էքսկուրսիան սկսվում է նրանով, որ էքսկուրսիայի վայրում Դաստիարակը հավաքում է բոլոր երեխաներիմ, հիշեցնում էքսկուրսիայի նպատակը, տրված առաջադրանքները, սաների անելիքներն ու պարտավորությունները:Էքսկուրսիայի ժամանակ դաստիարակը աշակերֆների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի երեխան անհրաժեշտ ուշադրությամբ դիտի այն:Դաստիարակի հիմնական խնդիրն է նախատեսված օբյեկտի դիտման, զննման ճիշտ կազմակերպումը:Դրա համար ամենից առաջ երեխապերի մեջ հետաքրքրություն պետք է առաջացնի դեպի տվյալ օբյեկտը,որպեսզի նրանք անհրաժեշտ ուշադրությամբ ու լարվածությամբ դիտեն այն: Այս նպատակով նա երեխաներին այնպիսի հարցեր պետք է առաջադրի,որոնց պատասխանը գտնելու համար նրանք հարկադրված լինեն

ամբողջ էքսկուրսիայի ընթացքում ուշադրությամբ դիտել ուսումնասիվող օբյեկտը, առարկան, երեւույթը, փորձեն այն ընկալել բազմակողմանի, համեմատել այն այլ օբյեկտների, առարկաների, երեւույթների հետ համեմատելու,գտնելու դրանց էական ու երկրորդական հատկանիշները, դրանց առանձին մասերն ու համադրման ձեւերը:Էքսկուրսիաների անցկացման ընթացքը կարելի է բաժանել փուլերի, եւ յուրաքանչյուր փուլի համար երեխային տալ առանձին հանձնարարություն: Առաջին հանձնարարություն ստուգելուց հետո կարելի է տալ հաջորդ հանձնարարությունը: Այսպիսի մոտեցումը օբյեկտի զննությունը դարձնում է ավելի մատչելի ու կոնկրետ,երեխան միանգամից իրենց ուժերից վեր հանձնարարություններ չեն ստանում: Էքսկուսիայի անցկացման այս ձեւը ավելի արդյունավետ է միջին խմբում նաեւ ցանկալի է կազմակերպել գավառագիտական էքսկուրսաներ(դեպի թանգարան,կենդանաբանական ու բուսաբանական այգիներ, պատմական հուշարձաններ, սելեկցիոն կայաններ):Վերջինիս մեթոդական տարբերությունն այն է,որ այսպիսի վայրերում ավելի շատ նմուշներ կարելի է տեսել քան անհրաժեշտ է, ուստի դաստիարակը նախապես պետք է ծանոթանա առկա նմուշներին, որպիսի էքսկուրսիայի ընթացքում կարողանա այնպես կազմակերպել ընթացքը, որ երեխաները հնարավորինս քիչ ավելորդ նմուշներ տեսնեն:Էքսկուրսիայի ընթացքում կարելի է նախապես պայմանավորվել էքսկուրսավարի հետ, ասել նրան ասվելիք նութին անհրաժեշտ խորության, ծավալի մասին, եւ նրան թողնել ընթացիկ բացատրությունները: Բայց նաեւ բացատրությունները կարող են մատուցվել հենց ոդայակի կամ դաստիարակի կողմից,եթե իհարկե նա նախօրոք շատ լավ ուսումնասիրել է նյութը, ծանոթացել ցուցանմուշներին եւ դրանց դասավորությանը:Յուրաքանչյուր ցուցանմուշի մասիներեխային պետք է տեղեկություն տալ առանձին- առանձին: Ընդ որում այն կարելի է անել 2 ձեւով. Բացատրել այնուհետեւ թուլ տալ երեխային զննել դրանք, կամ հակառակը՝ թույլ տալ, որ ուսումնասիրեն, ապա տալ անհրաժեշտ մեկնաբանությունը:Էքսկուրսիայի ընթացքում երեխաների մեջ թեմային չվերաբերվող բազմաթիվ հարցեր կարող են առաջանալ, որոնք երբեմն լուրջ դժվարություններ կստեղծեն դստիարակի համար, մանավանդ եթե նա սկսնակ է: ՈւԴաստիարակի հիմնական խնդիրներից մեկն էլ պետք

է լինի այն,որ նա երեխաներին պահի էքսկուրսիայի հետապնդած նպատակների շրջանակներում՝մի կողմ թողնելով երկրորդական կարգի կամ բուն նյութին չվերաբերվող հարցերը, որոնք քննարկման կարող են ենթարկվել էքսկուրսիայից հետո դասսիարակը պետք է պատասխանի միայն այն հարցերին, որոնց պատասխանները կլինեն ընկալելի եւ կկարողանան ազդել երեխայի մոտ աշխարհաճանաչողության զարգացմանը: Իհարկե այդ հարցերի մեջ կհանդիպեն այնպիսինները, որոնք երե՝ան ինքնուրույն կարող է լուծել, լրացուցիչ դիտարկումների եւ հետազոտությունների միջոցով: Նման դեպքում պետք է թողնել, որ սանը ինքը գտնի իրեն հետաքրքրող հարցի պատասխանը:Նպատակահարմար է արդյունաբերական եւ գյուղատնետեսական արտադրությանը,քաղաքի եւ գյուղի կյանքին վերաբերող գործնական բնույթի էքսկուրսաիները անցկացնել գործարանում, էլեկտրակայանում, բանջարանոցում, այգում եւ այլ ձեռնարկություններում: Եվ սրանք բնականաբար իրենց բնույթով տարբերվում են դեպի բնություն կազմակերպվող էքսկուրսաիներից:Այսպիսի դեպքերում երեխան ծանոթանում է նյութական բարիքների ստեղծման մեխանիզմներին եւ ընթացքին, զրուցում է արտադրությունում աշխատող մարդկանց հետ, սովորում է հարգել աշխատանքի մարդկանց, հարգանքով վերաբերվել այն բարիքներին,որն ինքն օգտագործում է, եւ հաճախ անգամ գաղափար չի ունենում թե ինչ դժվարությամբ են դրանք արտադրվել:Իսկ երբեմն էլ երեխաները անձամբ մասնակցում են արտադրության գործընթացին:Այսպիսի էքսկուրսիաները ունեն թե ճանաչողական եւ թե դաստիարակչական բնույթ: Եվ նմանատիպ էսկուրսիաները սովորաբար թողնում են դրական մեծ ազդեցություն:

Գործնական մաս

Համագործակցային էքսկուրսիա դեպի աշնանային այգի բերքահավաքի

Խումբ ՝ միջին

Նպատակը՝ ձևավորել շրջակա միջավայրի, բնության նկատմամբ հուզական, հոգատար և համապատասական վերաբերմունք Խնդիրները՝ ձևավորել ճանաչողական ունակություններ բուսական աշխարհի տարվա եղանակների, բնության սեզոնային փոփոխությունների մասին, բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողություն հաղորդել :

Ակնկալվող վերջնարդյունքները՝ ճանաչի և անվանի միրգը, պտղատու ծառը, նկատի բնության գեղեցկությունը, դրսևորի հոգատար վերաբերմունք, կարևորի մարդու աշխատանքը բնության մեջ

Նախապատրաստում՝ պայմանավորվածություն այգեպանի հետ, նյութերի հավաքում՝ զամբյուղներ պոլիէթիլեն տոպրակներ և այլն: Դաստիարակը սաներին տեղեկացրեց, որ նրանք գնալու են այգի՝ բերքահավաքի, հիշեցրեց բնության մեջ վարքի կանոնների մասին:

Հիմնական մաս՝ քանի որ այգին բավականին հեռու էր, Այգում դաստիարակը ցուցադրմամբ ներկայացրեց ծառի կառուցվածքը, պտուղները, սաների ուշադրությունը հրավիրեց բնությանգեղեցկությանը և բերքահավագի գործընթացին: սաները հաճույքով մասնակցեցինբերքահավաքին, այլում երգեցին, խաղացին:

Ամփոփիչ մաս՝ էքսկուրսիան ավարտվելուց հետո , դաստիարակն ու սաները վերլուծեցին էքսկուրսիան:

Կարծում եմ, որ գործունեության այս ձևը, չնայած առաջատար չէ , բայց շատ կարևոր է, և պատան այն անցկացնել փոխարինելով ավանդական ձևերին խմբասենյակում անընդմեջ թեմատիկ պաստառներով, դեկորատիվ իրերով, կամ որ ամենավատն է : առանց

դրանց . սոսկ տեղեկություն փոխանցելու ձևերը), որոնք փոքր-ինչ «հնացած» են ժամանակակից երեխայի հետաքրքրությունները բավարարելու համար:

Այսպիսով, գործունեության այս ձևի կազմակերպման արդյունավետության և բազմաթիվ դրական կողմերի կողքին կա նաև մի փոքրիկ բացասական կողմ, այն է՝ էրսկուրսիաներից շատերը (հատկապես մշակութային այցերը, թատրոններ, թանգարաններ այցերը, կամ բնության էքսկուրսիաներից այսց կենդանաբանական այգի և այլն), ենթադրում են որոշակի ֆինանսական միջոցների ներդրում, որի հոգսը ոչ միշտ է կարողանում ուսումնական հաստատությունը հոգալ, և ավտոմատ կերպով այդ հոգսը ընկնում է ծնողի ուսերին: Հաճախ բախվում ենք՝ այնպիսի խնդրի, որ ծնողը այդ ֆինանսավորումը դժվարանում է կատարել, ինչի պատճառով երբեմն չեղարկվում են որոշ պլանավորված էքսկուրսիաներ, կամ փոխարինվում դրանք՝ մեկ այլով, կամ լինում են դեպքեր, երբ երեխան չի մասնակցում (չնայած նրան, որ միշտ փորձում ենք գտնել ելքեր կամ միջոցներ, այդ երեխաներին էլ ներգրավելու համար), ինչը հակասում է մեր մի շարք խնդիրների լուծմանը, նպատակների իրականացմանը:

Մեթոդիստի Եզրակացություն

Այսպիսով երեխաներին շատ դուր եկավ կազմակերպած էքսֆուրսիան որը շատ ուսուցանող էր և շատ հագեցած։Ինչպես միշտ Ընկեր Վիրաբյանը կարծում եմ պատվով է կատարել իր առաջ դրված հանձնարարությունը և հեքիաթային օր պարքևել երեխաներին։

Երեխաները շատ ոգևորված էին և աշխույժ,ակտիվ մասնակցում էին բոլոր վարժանքներին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցական ուսումնական հաստատությունում էքսկուրսիաները և մշակութային այցերը մանկավարժական գործընթացի կարևոր մասն են։ Դրանք այցելություն են դեպի բնության գիրկ, անարժան վայրերը, զրադարաններ, թանգարաններ, արտադրամասեր, դարացներ և այլն ուսումնադաստիարակչական նպատակներով, որոնը հնարավորություն չէր ընձեռում ստանալ մեծաքանակ տեղեկատվություն, և հատկանշականն այն է, որ այս պարագայում ստացվող տեղեկացուն լինում է առավել տպավորիչ, հուզական, մայուն, որովհետև փոխանցումն իրականացվում է անմիջական շփման և հաղորդակցման միջոցով երկորիաների ցունը բացատրությամբ րուադրումն է, այն զենական մետաղ է, երակուրսիան պանավորում, կազմակերպում է դաստիարակը, այն կարող է վարել դաստիարակը կամ էրակոաավարը, ում մեկնաբանմամբ սաները սովորում են ճիշտ նկալել տեսածը ցուցադրածը։

Գործունեության այլ ձևերի ժամանակ մեծ բավականություն են ստանում թե՛ մեծերը, թե՛ փոքրերը։ Սաների համար նա ոչ միայն հետաքրքիր ժամանակ է, այլ նաև ուսումնադաստիարակչական գործունեություն, որը զարգանում է մտածողությանը,ձևավորում է հուզական ոլորտը, դաստիարակում վարքի դրսևորման ձևեր, ինչպես նաև մարզվում է ֆիզիկական տոկունություն։ Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում են էսթետիկ զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, դաստիարակում են հարգանք ուրիշների աշխատանքի նկատմամբ, հայրենիքի նկատման, բնությունը

գնահատելու և պաշտպանելու ցանկություն, ընդլայնում են սաների մտահորիզոնը ձևավորում աշխարհայացքը, նպաստում՝ խոսքի զարգացմանը այն տների մոտ ձևավորում է ան այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիր հանդուրժողականություն), համագործակցությունը, փոխադարձ աջակցությունը, խնդրահարույց իրավիճակներում ինքնուրույն մտածողությունը բաղատական մտածողությունը, կողմնորոշումը,միջանձնային հարաբերությունների ձևավորումը, կոնֆլիկտների հաղթահարման որոշակի հմտությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայեցակարգ» գիտական և մեթոդական էլեկտրոնային ամսագիր. URL՝ http://e-koncept.ru/2016/76560.htm:

2. Ушинский - "Собрание сочинений".(1948г.стр.333).

3. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014թ

4. Լարիսա Մորոզովա «Ինչպես ճիշտ և հետաքրքիր անցկացնել էքսկուրսիան մանկապարտեզում» URL՝ https://mclkic.net/zanyatiya-s-detmi/konspekt-ckskursii-v-sredney-grupp.html

5. Կամենևա Լ.Ա. «Մանկապարտեզում երեխաներին բնությանը ծանոթացնելու մեթոդները»

6. Կոնդրաշովա Մ.Ա. «Նախադպրոցականների էկոլոգիական կրթությունը պարապմունքներին և առօրյա կյանքում». Մեթոդական ուղեցույց. 1991 թ: